

57 374.6  
4-58  
ux

- MAR 2010

2 40

ԿՈՒԼՏԱՐԾԱՎ

№ 1-2

ԱՆԳՐՈՎԵՐ ՀԱՆՐԱՆՈՒՄ ԱՐՏ. ՀԱՆՐԱՆՈՒՄ

ԲԱՆԴԱԿԱՆԱԿԱՐ

## ԱՆԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

(Համ. Կ. (բ) Կ. Կենտկոմի վորոշումը)

I. Ժողովրդական տնտեսության վերակառուցման խնդիրները և աշխատավորական մասսաների հսկայական ձգտումը՝ բարձրացնելու իրենց կուլտուրական մակարդակը՝ վճռականորեն պահանջում են խիստ փոփոխում մտցնել անդրադիտության վերացման հետագա աշխատանքների մեջ:

Այդ պատճառով կենտկոմն անհրաժեշտ է գտնում արմատապես վերակառուցել աշխատանքի ամբողջ սխեման՝ կուտակված փորձի հիման վրա և ձգտել պլանային կազմակերպելու անդրադիտության վերացման ամբողջ աշխատանքները միասնական ծրագրի հիմունքով, միացնելով անդրադիտության վերացման աշխատանքներին մասնակցող բոլոր կազմակերպությունների միջոցները, ուժերը և խնայողորդությունները:

Անդրադիտության վերացման հետագա աշխատանքների ընթացքում հին և դործնականում իրեն արդարեցրած ձևերի հետ միասին պետք է լայն կերպով ոգտադործվեն աշխատանքների հետևյալ ձևերը, վորոնք յերևան է հանել կուլտարչավը:—

ՀԱՅԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ  
Ա. ՄԱՍԻՆԻՍԻԱՆ  
Բնվ. 6

13939-57

1. Անդրադիտության վերացման աշխատանքներին մասնակից դարձնել կուսանդամներին, կոմյերիտականներին, պրոլետարական ուսանողության, յերկրորդ աստիճ. դպրոցների բարձր խմբերի աշակերտության, խորհրդային ինտելիգենցիայի լուսաշխատավորներին և այլ խմբակներին քաղաքում և գյուղում, կազմակերպել նրանց աշխատանքները սիստեմատիկորեն դեկավարելու գործը: Այդ աշխատանքները համասարեցնել կուսակցական, կոմյերիտական և հասարակական պարտականություններին (нагрузка):

2. Քաղաքային և գյուղական խորհրդներին կից կազմակերպել անդրադիտության վերացման աջակցող խմբակներ, դպրոցների աշխատանքների հասարակական դիտումներ, անդրադետների և կիսադրադետների կոնֆերանսներ, գրադետների շեֆություն անդրադետների նկատմամբ, ինչպես և կազմակերպել կոմյերիտական ստորին կազմակերպությունների, բանվորուհիների և գեղջկուհիների պատգամավորական ժողովների, գործարկումների, կուլտսանձնաժողովների մասնակցությունը անդրադետներին դպրոցներ համախմբելու, ինչպես և մասնակցելու ամբողջ կազմակերպչական աշխատանքներին:

3. Անդրադիտության վերացումը կապակցել քաղլուսավարական մասսայական աշխատանքների բոլոր ձևերին, հասարակական-քաղաքական հարցերի շուրջը տարվող դրույցներին, դասախոսություններին, երակուրսիաներին և ակումբային աշխատանքներին, կիսադրադետների համար գրքերի և թերթերի ոգտագործման, կիսադրադետներին ու անդրադետներին հասարակական աշխատանքներին մասնակից անելուն:

4. Ուսուցման ձևերը ծրագրերը, ուսուցման պիտույքներն ու մեթոդներն ավելի հարմարեցնել քաղաքի և գյուղի առանձին կատեգորիաների անդրադետների աշխատանքների պայմաններին ու կենցաղին:

II Կենտրոնական կոմիտեն առաջարկում է կուսակցական, կոմյերիտական և հասարակական կազմակերպություններին ինչպես և «կան»-ին՝ վճականորեն ուժեղացնել անդրադիտության վերացման թափը, ընդգրկելով՝ քաղաքներում՝ առաջին հերթին արդյունաբերական բանվորներին և պրոլետարիատի նոր խավերին, իսկ գյուղում՝ բատրակներին, խորհրդային տնտեսությունների բանվորներին սեզոնային աշխատողներին, չբավորության և կոլտնտեսությունների անդամներին: Նպատակ դնել՝ վերացնել արդյունաբերական բանվորների անդրադիտությունը մեկ տարվա ընթացքում, իսկ խորհրդային տնտեսությունների բանվորների ու կոլտնտեսության անդամների անդրադիտությունը յերկու տարվա ընթացքում: Անհրաժեշտ համարել դրադիտություն սովորեցնել նաև սահմանված տարիքից (35) բարձր արդյունաբերական և գյուղատնտեսական բանվորների նկատմամբ: Կարևորագույն գործ է հանդիսանում անչափահասների անդրադիտության վերացումը, մասնավորապես այդ նպատակով կազմակերպել նրանց համար միամյա և յերկամյա հատուկ դպրոցներ, փորպես հասակավոր անդրադետների քանակի ավելացումը կրճատելու միջոց:

Ապահովել 1929-30 թ. աշխատանքների թափի ուժեղացումը՝ համեմատելով կուլտարչավի ձեռք բերած արդյունքներին, առնվազն կրկնակի և նշանակալից չափով ավելացնել կիսադրադետների դպրոցների ցանցը:

III. Անդրադիտության վերացման ընդհանուր աշխատանքների մեջ կուսակցական կազմակերպությունները պետք է ապահովեն աշխատանքների գործնական ու սխտեմատիկ ղեկավարությունը և կուսակցական ուժեր ամրացնեն այն մարմիններին, վորոնք աշխատում են անդրադիտության վերացման գծով (անդրադիտության վերացման հանձնաժողովներ, «Կան»-ի խորհուրդներ, լուսբաժիններ) :

ՀԼԿՑԵՄ-ի կազմակերպությունները պետք է ելլա՞վել ընդարձակեն իրենց անդամների մասնակցությունը անդրադիտության վերացման գործնական աշխատանքներին :

Քաղաքային և գյուղական խորհուրդները պետք է անմիջականորեն իրականացնեն անդրադիտության վերացման գործի ղեկավարությունը և դրա շուրջը լայն խորհրդային հասարակայնության համախմբումը :

Անբավարար համարելով արհեստակցական և կոոպերատիվ կազմակերպությունների մասնակցությունը անդրադիտության վերացման գործին, անհրաժեշտ գտնել ապահովելու այդ կազմակերպությունների սխտեմատիկ մասնակցությունը անդրադիտության դեմ պայքարելու գործում՝ անդրադետներ համախմբելու, շենքեր տրամադրելու, կուլտֆոնդերից միջոցներ հատկացնելու, պարապմունքների հաճախմանը և աշխատանքների արդյունքներին հետևելու և սովորողներին բոլոր տեսակի քաղկրթական աշխատանքներով սպասարկելու ճանապարհով :

IV. Հիշատակելով, վոր «Կան»-ը իր աշխատանքները տարել է փակված, ապարատային մեթոդներով և չի կարողացել անդրադիտության վերացման շուրջը

գաղմակերպել լայն հասարակայնության, առաջարկել «Կան»-ին վճռականորեն վերակառուցել իր աշխատանքների մեթոդները, հրաժարվել առևտրական գործունեությունից, հիմնական նպատակ դնելով ընկերությունը դարձնելու իսկական մասսայական կազմակերպություն, վորը ամբողջ խորհրդային հասարակայնությանը մոբիլիզացիայի յե յենթարկելու անդրադիտության վերացման գործի համար : Ընկերության գլխավոր խնդիրը համարել՝ ընդարձակել աշխատանքները գյուղում, այդ աշխատանքներում լայնորեն ոգտագործել բանվորական միությունների նախաձեռնությունը՝ գյուղի շեֆությունը վերցնելու, արձակուրդում յեղած Կարմիր բանակայիններին և ուսանողություն : Նպատակահարմար գտնել «Կան»-ի բլիշներ կազմակերպել միայն այն ձեռնարկություններում, ուր մեծ քանակությամբ անդրադետներ կան :

V. Մի շարք արևելյան հանրապետություններում և չրջաններում, ինչպես և առանձին ազգային փոքրամասնությունների մեջ գրեթե ընդհանուր անդրադիտության գոյությունը առաջադրում է անդրադիտության վերացման խնդիրը, վորպես այդ չրջաններում ամբողջ կուլտուրական աշխատանքների հիմնական և կարևորագույն խնդիր :

Արևելյան հանրապետություններում, չրջաններում և ազգային փոքրամասնությունների միջև անդրադիտության վերացման աշխատանքների ընթացքում անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել՝ առաջին հերթին զրադիտություն սովորեցնելու կուսանդամներին, կոմյերիտականներին, բանվորներին, խորհրդային և կոոպերատիվ ակտիվին, կանանց հա-

մար դպրոցների ցանց կազմակերպելուն, ինչպես և տեղական բնակիչներից անգրագիտութունը վերացնողների կադր (մասնավորապես կանանցից) պատրաստելու գործին:

VI. Կանանց մեջ ավելի բարձր տոկոսի անգրագիտութունը պահանջում է ամենաչտապ կերպով վերացնել դրա պատճառները, գլխավորապես կենցաղային բնույթի, վորոնք արգելք են հանդիսանում բանվորներին և գեղջկուհիներին գրագիտութուն սովորելու: Անհրաժեշտ է մաքսիմալ չափով հարմարվել նրանց կենցաղային պայմաններին (լիկկայանների աշխատանքները փոխադրել հանրակացարանները, պարապմունքների ժամերը սահմանել համաձայն արտադրության ամենաների և գեղջկուհիների տնտեսության մեջ ու կոլխոզներում որպես ավելի ազատ ժամերին, հսկողութուն սահմանել յերեխաների համար, այդ գործին մասնակից դարձնել բնակարանային ընկերություններին, «Յերեխաների Բարեկամների» ընկերության և այլն), լայն կերպով ընդարձակել խմբակային և ինդիվիդուալ ուսուցումը ըստ նրանց բնակավայրի:

VII. Անհրաժեշտ համարել գեկրես հրատարակելու պարտադիր կերպով նախադիմակոչներին գրագիտութուն սովորեցնելու վերաբերյալ:

VIII. Հանձնարարել Պետհրատին և Կենտրոնական հրատարակչության տպահովել 1929-30 թ. անգրագետների համար անհրաժեշտ այբուբենարանների, դասագրքերի, ինչպես և կիսագրագետների համար գեղարվեստական, հասարակական-քաղաքական և այլ գրականության մասսայական տիրափով հրատարակումն ու ետանցումը: Հանձնարարել Կենտկոմի Ագիտպրոր

բաժնին մշակել, 1930 թ. սկզբից կիսագրագետների համար մասսայական հասարակական-քաղաքական ամենուրյա թերթ հրատարակելու հարցը: Հրահանգել մամուլին ավելի ընդարձակորեն լուսաբանել կուլտարչավի փորձի և անգրագիտության դեմ պայքարելու նոր ձևերի արդյունքները: Այդ հարցերի առթիվ հրատարակել մասսայական գրականութուն:

IX. Անգրագիտության վերացման նյութական բազան ամրապնդելու և դրա թափը վերջնականապես արագացնելու նպատակով Կենտկոմն անհրաժեշտ է համարում՝ թույլ չտալով իջեցնելու պետական և տեղական բյուջեներով անգրագիտության վերացման ծախքերի տեսակարար կշիռը, պետական բյուջեյում նախատեսել 1929-30 թ. դպրիորեն ավելացնել հետամնաց չրջանների (Կենտ. սահողյան չրջան, Միջ-Վոլգյան չրջան) և աբևեյան հանրապետությունների ու մարզերի դուտացիոն հատկացումները:

Նկատի ունենալով, Վոր աշխատանքի անհրաժեշտ թափը չի կարող ապահովվել միայն բյուջետային հատկացումներով, անհրաժեշտ համարել, Վոր արհեստական և կոոպերատիվ կազմակերպությունները զգալիորեն ավելացնեն կուլտ-ֆոնդերից արվող հատկացումներն՝ իրենց անդամների անգրագիտության վերացման համար, ըստ վորում անգրագիտության վերացման գործում ավելի ուժեղ արհմիությունները պետք է նյութական ոգնութուն ցույց տան ավելի թույլ արհմիություններին:

ՀԱՅԳՈՒԻԳՐԱՖԻ ՏՊԱՐԱՆ

Գրառնագլխավոր 2492 (բ) պատվ. 204 ՏԻ

ՀՀ Ազգային գրադարան



NL0222762

53.559

